



Երկրագունդի հիսիսային կիսագունդին մեջ ձմրան օդը ցուրտ կ'ընէ: Մեր մարմինը ինչպէ՛ս կը հակազդէ այդ ցուրտին, եւ մինչեւ ո՞ր աստիճան կրնայ տոկալ անոր:

Առանց հագուստի մարդ արարածը չի կրնար ապրիլ -15 աստիճան ջերմաստիճանէն աւելի վար: Ցուրտին ազդեցութեան տակ մեր մարմինը պաշտպանողական բազմաթիւ քայլեր կ'առնէ:

Նախ եւ առաջ մորթին տակ արիւնի երակները կը կծկուին եւ արիւնը կը դրկեն մարմնին ներքին բաժինները:

Ապա մեր մարմնին բարակ մազերը կը կանգնին, կազմելու համար մեր մորթը մեկուսացնող օդի խաւ մը:

Մեր սիրտը կը սկսի աւելի արագ տրոփել՝ արիւնը հասցնելու համար էական գործարաններուն:

Մեր մարսողութիւնը կ'արագանայ, տաքութիւն յառաջացնող անհրաժեշտ ածխաջրերը (կլուսիտ), սպիտակուցները (փրոթէին) եւ իւղերը հալաքելու համար:

Այս բոլոր գործողութիւններուն նպատակն է մեր մարմինը 37 աստիճան ջերմաստիճանի վրայ պահել, որովհետեւ ցուրտը կրնայ դարմանել եւ նոյն ատեն մահուան պատճառ դառնալ: Ան կրնայ արիւնահոսութիւնները դադրեցնել եւ կրնայ նաեւ ցաւը նուազեցնել կամ շատ աշխատած մկանները եւ յօդերը հանդարտեցնել, ինչպէս օրինակի համար, մարզիկներու պարագային:

ԱՐԴԵՕՔ ՊԷՏՔ Ե ԶԳՈՒՇԱՆԱՆՔ ՑՈՒՐՏԵՆ



Սակայն սաստիկ ցուրտին մեր մարմինը երկար ատեն չի կրնար տոկալ: Օրինակի համար, երբ մենք -28 աստիճան ցուրտը կը զգանք, այդ ցուրտին ազդեցութեան տակ գտնուող մորթը կրնայ սառիլ 10-30 վայրկեանէն:

Իսկ երբ մենք դուրսը կը գտնուինք շատ ցուրտ օդին, շատ կարելու է որ, մենք ծածկենք մեր մարմնին ծայրի բաժինները: Մեր գլուխը, որ մեծ քանակով տաքութիւն կը կորսնցնէ, սակայն նաեւ՝ ձեռքերն ու ոտքերը, որովհետեւ երբ մեր մարմինը ցուրտին կը հակազդէ, արիւնը կ'ուղղուի ներքին գլխատր գործարանները (լեարդ, սիրտ, թոքեր...), հետեւաբար սիրտին ամենէն հեռուն գտնուող գործարանները (ձեռքերը եւ ոտքերը) նուազ արիւն կը ստանան: Կարծեք՝ մարմինը այդ գործարանները կը զոհէ:

Գիտե՞ի՞ր, որ գոյութիւն ունի ջերմաստիճան մը, ուր ամեն ինչ կը կենայ, նիւթը կ'անշարժանայ: Նիւթերը կազմող անդամներուն եւ մասնիկներուն արագութիւնը կ'ոչնչանայ: Այս ջերմաստիճանը -273,15-ն է, անիկա կը կոչուի բացարձակ զերօ: Այդ ջերմաստիճանէն աւելի ցուրտ օդ չկայ: Այս պատճառով է, որ երկու դարէ ի վեր գիտնականները կը փորձեն այս բացարձակ զերոյին հասնիլ: Ասիկա իրականացնելու համար անոնք կը գործածեն լեյզըրներ, որոնք կարելիութիւնը կու տան մասնիկները գրեթէ ամբողջովին անշարժացնելու:

Սակայն մինչեւ այսօր տակաւին ամբողջովին չեն յաջողած: Բացարձակ ցուրտը կը պահէ տակաւին իր գաղտնիքները:



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՈՒՔԵԱՆ ՆԿԱՐԱՉԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԵԱՆ

ԱՐԵՒ ԵՒ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Արեւը Ծիր Կաթինի թելերէն մէկուն պատկանող սովորական աստղ մըն է: Արեւը դրութեան մը կեդրոնն է, որ կը պարունակէ 9 մոլորակներ իրենց արբանեակներով, հազարաւոր աստղակերպեր, գիսաւոր աստղեր եւ երկնաքարեր, ինչպէս նաեւ փոշիներ ու կազեր:

Արեգակնային դրութեան ծնունդը


Արեգակնային դրութիւնը կազմուած է 5 միլիառ տարի առաջ ինքն իր վրայ դարձող կազային ամպէ եւ փոշիէ: Հետզհետէ այս ամպին կեդրոնը կծկուած է եւ ծնունդ տուած Արեւին: Ապա, Արեւը շրջապատող կազերը սկսած են խտանալ կազմելու համար 9 մոլորակները եւ իրենց արբանեակները՝ Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երեւակ, Ուրանոս, Նեպթիւն եւ Պղուտոն:

Արեւ

Արեւը մեր աստղախումբի հարիւր միլիոնաւոր աստղերէն մէկն է: Կը բաղկանայ գրիխաւորաբար ջրածինէ եւ հելիումէ, որոնք կը բոցավառին հսկայ գունդի մը մէջ: Արեւին ընդերքը, ուր կը տիրէ մինչեւ 15 միլիոն աստիճանի հասնող ջերմութիւն մը, կարելի կը դարձնէ կորիզային հակազդեցութիւններ, որոնք ջրածինը կը վերածեն *հելիումի*՝ արձակելով ուժանիւթի հսկայական քանակներ: Արեւին զանգուածը մօտաւորապէս 333 անգամ աւելի է քան երկրինը եւ իր տրամագիծը 109 անգամ աւելի է երկրին տրամագիծէն:




Կրնա՞ս գտնել առաջին պատկերին եւ միւս մնացած նկարներուն միջեւ գոյութիւն ունեցող երկու տարբեր մանրամասնութիւնները:



Կրնա՞ս գտնել երազին հասցնող ճամբան:

Կետերը իրարու միացուր 1-108՝ յայտնաբերելու համար պահուած պատկերը:



ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԲԱԿԼԱՆ



Մէյ մըն ալ վար կը նայի: Ի՛նչ տեսնէ. գիտը փոքրացեր, կորսուեր էր ծառերուն մէջ:

Անվախօրէն կը շարունակէ մագլցիլ, մինչեւ որ կը հասնի ամպերուն:

Հոն, ամպերուն մէջ, դղեակ մը կը տեսնէ, մեծ ու շքեղ դղեակ մը, ու դղեակին դրան առջեւ՝ պառաւ մը:

- Բարի լո՛յս, մայրի՛կ,- կ'ըսէ Արամ մօտենալով անոր,- իմ անունս Արամ է: Ես կը բնակիմ հո՛ն, վա՛ր, խրճիթին մէջ: Կրնա՞ս ինծի ըսել, թէ ո՞ւր կը գտնուիմ ես, կամ որո՞ւն տունն է այս:

- Ո՞վ ես դուն, ինչպէ՞ս եկար հոս.- կը հարցնէ պառաւը աչ ու ձախ նայելով: Ասիկա մարդակեր հսկային տունն է: Ան հիմա հոս չէ, բայց ո՛ւր որ է կու գայ: Շուտով հեռացի՛ր այստեղէն, ապա թէ ոչ...

Ճիշդ այդ պահուն, դղեակը կը դորդայ ու կը լսուին սարսափելի ոտնաձայներ «Թրիք թրաք...»: Հըսկային ոտնաձայներն էին անոնք:

Արամ կը շուարի, ի՛նչ ընէ, ո՞ւր երթայ: Ծերունին կը խղճայ անոր ու կ'ըսէ.

- Դուն ազնիւ ու բարի մանչուկ մը կ'երեւիս: Ես քեզի պիտի օգնեմ: Մտի՛ր այս կրակարանին մէջ ու հոնկէ դուրս մի՛ ելլեր, մինչեւ քեզի ըսեմ:

Արամ կը հնազանդի ու լուռ կը սպասէ:

Քիչ ետք ներս կը մտնէ հսկան, հուժկու մարմնով, սարսափազդու դէմքով. ձեռքին՝ հաւիկ մը ու ոսկիով լեցուն տոպրակ մը:

- Տե՛ս ի՞նչ գողցած եմ այսօր,- կ'ըսէ խօսքը ուղղելով պառաւին ու հաւիկը կը դնէ սեղանին վրայ:

- Հաւի՛կ, ինծի հաւկիթ մը կ'ածե՞ս,- կ'ըսէ:

Ու հաւիկը հաւկիթ մը կ'ածէ, ոսկի հաւկիթ մը:

Հսկան ուրախութենէն կը բացազանչէ. «Հէ՛յ աշխարհի ամենէն հարուստ մարդն եմ ես»:

Ու կը մօտենայ կրակարանին: Արամ վախէն կը կծկուի:

- Հը՛մ, ես համեղ մսի հոտ կ'առնեմ, երեխայի հոտ, ի՛նչ եփած ես ինծի այսօր,- կը մռնչէ:

- Չէ՛, չէ՛, կը սխալիս, մտտ ճաշիս հոտն է,- կ'ըսէ պառաւը կեղծ ժպիտով ու պնակ մը կերակուր կը բերէ հսկա-

յին: Հսկան վայրկեանական կը լափէ գայն: Պառաւը երկրորդ պնակ մը կը բերէ, ապա երրորդ մը, չորրորդ մը ու վերջապէս հինգերորդ մը:

Հսկան ազահօրէն կը լափէ բոլորը ու կը նստի գողցած ոսկիները համբելու:

Քիչ ետք քունը կու գայ ու կը քնանայ:

Արամ անմիջապէս դուրս կ'ելլէ թաքստոցէն, տոպրակ մը ոսկին կ'առնէ, հաւիկը կը փախցնէ ու՝ «Ցտեսութիւն, մայրի՛կ», ըսելով կը փախչի:

- Մայրի՛կ, տես ինչե՛ր բերած եմ քեզի, ոսկիներ, ոսկի-ոսկի հաւկիթներ:

Ու կը պատմէ մայրիկին ամեն բան: Մայրիկը ապշած մտիկ կ'ընէ:

- Հաւի՛կ, ինծի հաւկիթ մը կ'ածե՞ս,- կ'ըսէ Արամ:

Ու հաւիկը հաւկիթ մը կ'ածէ, ոսկի հաւկիթ մը:

(Շարունակելի)



ԵՐԱԶԱՅԻՆ ՎԱՅՐԵՐ ԶՐԱՇԱԼԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր երկրագունդը սքանչելի տեսարաններով շատ հարուստ է: Ըլլան անոնք բնական, թե մարդուն կողմէ շինուած, բոլորն ալ նոյնքան հիացում կը յառաջացնեն մեր մէջ: Եկէ՛ք, այցելենք ու ծանօթանանք նոր վայրերու:

Ծով եւ արեւ՝ Սանթորինի, Յունաստան

Սանթորինին ճանչցուած է իբրեւ Յունաստանի ամենէն գեղեցիկ կղզին: Հոն սպիտակ ներկուած տուները խցկուած են հրաբխային ժայռերով լանջերու մէջ, եւ բոլորը կը նային Եգէական ծովու փայլփլող ջուրերուն:



Ճեներայ Բարրերա Լիճը՝ Փաթակոնիա, Չիլի

Փիրուզագոյն ջուրերուն վրայ կարծեք կը ծփան շքեղ մարմարեայ անցքեր, քարայրներ եւ սիւներ, որոնք քանդակուած են 6200 տարիներէ ի վեր՝ ալիքներուն կողմէ:



Տո Տաթթ Դեճը՝ Պալլիմոնի, Իրլանտա

Այս ծուռումուռ ճիւղերով ծառերու խորհրդաւոր անցքը կը հասցնէ իրլանտական մեծ տուն մը: Երկու դար առաջ տնկուած ծառերով այս անցքը Իրլանտայի ամենէն շատ նկարուած վայրերէն մէկն է:



Պաօպապի ծառերը՝ Մատակասքար

Այս երկնաքերներու նման ծառերը Մատակասքարի միակ ամենէն սքանչելի վայրերը չեն. Մատակասքարը աշխարհի չորրորդ ամենէն մեծ կղզին է:

Հոն գոյութիւն ունին անասուններու մօտաւորապէս 200 հազար տեսակներ եւ հոն միակ վայրն է, ուր լումերները վայրի վիճակի մէջ կ'ապրին:



Մերկի կղզեխումբը՝ Միանմար

Եթէ կ'ուզես ամէն ինչէ հեռանալ, ուղղուէ դէպի Հնդկաց ովկիանոսի այս կղզեխումբի 800 կղզիներէն մէկը: Իր հեռաւորութեան պատճառով ան ճանչցուած է իբրեւ «կորսուած աշխարհը»:

Այդ վայրը տարեկան կ'այցելեն միայն 2000 զբօսաշրջիկներ:



Վիքթորիա Փիք՝ Հոնկ Բոնկ

Վիքթորիա Փիք լերան գագաթէն կարելի է տեսնել շատ հեռուն, գրեթէ՝ ամբողջ Հոնկ Բոնկը: 549 մէթր բարձրութեան վրայ մեր աչքերուն առջեւ կը պարզուի քաղաքի երկնաքերներուն եւ մօտակայ կղզիներուն սքանչելի տեսարանները:



Հիւսիսափայլը՝ Թրոմսօ, Նորվեգիա

Մենք պետք է հեռաւոր հիւսիս ճամբորդենք ներկայ գտնուելու համար հիւսիսի օրօրա պորեալիսի (հիւսիսափայլ) տեսարանին, դիւթիչ բնական երեւոյթ մը, որ կը յառաջանայ արեւուն եւ հովերուն ազդեցութեան տակ երկրագունդին բեւեռային շրջաններու մթնոլորտին մէջ:

